

## ՎԵՐԱՓԱՌ ԸԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՎԵՐԱՐԱՆՈՒՄ՝ ՈՒՂԴՎԱԾ ՆՈՐՈՆԵԱ ԶԱՎԱՆԱՆԵՐԻՆ

(30 օգոստոսի, կիրակի, 1998 թ.)

Ես անցյալ օր առիթ ունեցա ձեզի մի քանի խոսք ուղղելու, երբ բերիք ինձ ձեր ավարտաճառերը: Կարճ, բայց իմ մտքիս հիմնական գաղափարները ձեզի ժանոթ են նաև իմ դասավանդման և դասախոսությունների միջից: Ես այսօր երկու հիմնական իրողությունների վրա եմ հրավիրում ձեր սևեռյալ ուշադրությունը: Առաջինը այն է, որ Սրբազանը երբ ասաց, թե այս նորասօծ քահանաները և աբեղա Դայր Սուրբը պիտի լինեն օրհնություն մեր Եկեղեցու համար, ես այդ առիթով մտածեցի, որ հոգևորականը եթե ինքը Աստծու օրհնության մի ճառագայթը չլինի, ինչո՞ւ հոգևորական է: Իրատեսությամբ պետք է մոտենալ կյանքին և ոչ թե զգացականությամբ, հոռոտությամբ, վերին խավերը զննցող գաղափարների աշխարհով: Ամեն Եկեղեցական ճշմարիտ եկեղեցական չէ անպայման, պատմությունը վկա, եթե մենք ունեցել ենք Ղևոնդ Երեց, Մեսրոպ Մաշտոց և ուրիշ մեծ դեմքեր, ապա ունեցել ենք նաև անարժան քահանաներ, անարժան հոգևորականներ:

Նոր ավարտեցի մի գրություն՝ «Ի՞նչ է Եկեղեցին», այս գրությանս մեջ ասացի, որ սովորական ժողովրդի համար Եկեղեցին շենք է, քար է, բայց որպեսզի կյանք լինի, ապա հոգևորականի անձը պետք է այդ կյանքի թարգմանը լինի: Դավատացյալը որտեղի՞ց ճանչնա, թե ի՞նչ է Եկեղեցին, մի՞թե նրա կաղապարից, նրա ձևից: Ո՛չ, հավատացյալը պիտի ճանչնա Եկեղեցին այն ձևից, այն կերպարից, որ հոգևորականը ինքն է ընծայում ժողովրդին: Եթե քահանան լավ չերզի շարականը, լավ չքարոզի Աստծու խոսքը, ինչպե՞ս Եկեղեցին կլինի Զրիստոսի հաստատած Եկեղեցին: Մենք՝ հոգևորականներս հայելի ենք, մեր միջից Զրիստոս պիտի տեսնվի: Սա որ մեր մտքից գնա, ես լինեմ ես, դու լինես դու, մյուսը լինի ինքը, իմ ընտանիքը, իմ շահը, իմ կերակուրը, ապա ամեն բան մեռած կլինի:

Սա ճշմարտությունն է, ասիկա ընթացիկ խոսք չէ: Իսկապես կտեսնենք, որ Եկեղեցու պարագային այսպես է, ինձի շատ անգամներ եկել են մարդիկ, պատասխանատու մարդիկ, լուրջ մարդիկ և ասել. «Վեհափառ, մեզի հոգևորական դրկիր, բայց ոչ այսպիսին»: Ինչո՞ւ են ասում «ոչ այսպիսին», քանզի նրանք ուզում են մի անձ, որ Եկեղեցուն պատիվ բերի, շունչ տա և ոչ թե իրեն գոհացնի: Դոգևորականությունը հեշտ կյանքը չէ, սակայն դրա մեջ կա նաև երջանկություն, տառապանքին մեջ կա ուրիշին համար գրկանք զգալը, երջանկություն տալ ուրիշին՝ դա ամենեն մեծ երջանկությունն է:

Երկրորդ ճշմարտությունն այն է, որ դուք Վազգենյան հոգևոր դպրանոցի առաջին շրջանավարտներն եք: Այդ հաստատությունը ինը տարիներ առաջ հաստատված, զեղեցիկ անուն ունի իր վրա՝ «Վազգենյան»: Վազգեն Վեհափառը շատ տառապած մարդ էր, ես ինքը շատ մոտեն ճանչած եմ վերջին տարիներուն, շա՛տ տառապանքների միջով անցած մարդ էր և Եկեղեցուն պատիվ բերող մարդ, Եկեղեցու անունը պայծառացնող՝ շուք բերող, փուշ ու փոշի չբերող անձ, և նրա անունով կնքված այդ դպրանոցը պետք է որ ձեզնով

ժանաչվի: Դուք ձեր ուսերին կրում եք այդ նվիրական հաստատության, այդ սքանչելի անձի անվան քաղցր լուծը: Հիսուս ասում է. «Ծանր է Իմ բեռը, բայց քաղցր» (Մատթ. ԺԱ 30): Ես կցանկանամ, որ դուք մեկ սկզբունքով շարժվեք և ընթանաք, ուր որ պիտի երթաք ծառայելու, պետք է որոշվի մեր եկեղեցական վերին իշխանության կողմից, ոչ թե դուք պիտի որոշեք երթալ, այլ պիտի դրկվիք: Հոգևորականը կողովի, ինքը չերթա, ինքը ընծայվող անձը չէ, այլ Աստծու ընծայածն է հոգևորականը: Եթե հիվանդանոցի մեջ պիտի ծառայեք ու հիվանդանոցի մեջ պիտի մնաք, ուրեմն պիտի մնաք, եթե բանտ պիտի երթաք՝ բատի մեջ, եթե բանակ պիտի երթաք՝ բանակ պիտի երթաք: Այդ գինվորները որտե՞ր պիտի լսեն Աստծու խոսքը: Ես չերթամ, մյուսը չերթա, ապա ո՞վ պիտի երթա: Այս հոգեբանությունը պիտի դուրս գա մեր հոգևորականության միջից:

Հիշում եմ, երբ նոր ձեռնադրված արեղա էի, նոր տարվան առիթով ինձի Լաթաքիա անունով քաղաքը դրկեցին՝ անտեսված մի քաղաք, ուր մի քանի տարի առաջ քահանան մահացել էր: Խոպան դաշտ էի գնում: Գնացի և իմ պարտքս կատարեցի որոշ ժամանակ, մինչև նշնակվեցի դպրեկանցի տեսուչի օգնական: Ես երբեք իմ մեծավորին չեմ ասել, թե ես ուզում եմ այստեղ կամ այնտեղ գնալ: Ես կուզեմ, որ մեր մեջ եկեղեցասիրության ու եկեղեցապաշտության հոգին տարածվի, և այն ատեն է, որ մենք կհաջողվենք մեր ժողովրդին մեջ մեր Եկեղեցու պատիվը բարձրացնելու գործում: Իմ խոսքս կուզեմ փակել թորգոմ Գուշակյան Պատրիարքի «Բարեկարգութիւն Հայ Եկեղեցւոյ» գրքին վերջին հոդվածի մեջ ըսվածով՝ «Հայ Եկեղեցու բարեկարգությունը կկայանա հայ հոգևորականի բարեկարգության մեջ»: Եթե արարողությունը քիչ մը կրճատել ես, այդ բան չի փոխի, բայց քահանան եթե այդ կրճատվածն էլ չկարողանա փոխանցել, ապա այն ժամանակ ի՞նչ պիտի անի:

Եկեղեցու բարեկարգությունը արտաքին ձևի մեջ չէ, ներքին հոգիին վերանորոգման մեջ է, և այդ «վերանորոգում» բառը չմոռնաք, այն պետք է լինի այսօրվա մեր Եկեղեցու հիմնկվան կարգախոսը, մեր ուժեղը, մեր ավանդությունների վերակենդանացումը և տարածումը ժողովրդի կյանքին մեջ: Առավոտից մինչ երեկո այս պետք է ըլլա ձեր կարգախոսը՝ «Նախանձ Տան քո կերից՞ գիս» (Մադ. ԿԸ 10): Այս սկզբունքը թող ըլլա ձեր կյանքին սկզբունքը: Անհրաժեշտ չեմ գտնում շատ ավելի խոսելը, այսքանով բավարարվում եմ և շնորհավորում Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գարեգին Սրբազանին և իմ գոհունակությունն եմ հայտնում այս գեղեցիկ օրվան առիթով:

Աստված օրհնի ձեզ բոլորիդ: